

Արձանագրություն №7/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013թ. ապրիլի 25-ին տեղի ունեցած թիվ 7 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 60-ը (վաթսուն):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի հաստատում (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան):
2. 2013/14 ուստարվա առկա ուսուցմամբ մագիստրատուրայի կանոնակարգի հաստատում (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
3. 2013/14 ուստարվա հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի կանոնակարգի հաստատում (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
4. Հաղորդում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության մասին: (Ձեկ.՝ կենտրոնի տնօրեն Լ. Տ. Հակոբյան)
5. Ընթացիկ հարցեր
 1. Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում կազմակերպվող <Ցեղասպանագիտություն> մագիստրոսական ծրագրի ուսման վարձի չափի հաստատում:
 2. Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի և ՌԴ Սիբիրի դաշնային համալսարանի հետ համատեղ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում <<ֆիզիկական էկոլոգիայի>> միջազգային համատեղ լաբորատորիա ստեղծելու մասին:
 3. Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Հայաստանի եվրոպական բարեկամների միջազգային ՀԿ-ի անդամ Չարլզ Թեննոքին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի հաստատման մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց նախապես ԳԽ-ի անդամներին ուղարկված զեկույցի շուրջ կատարված դիտարկումների բացակայության մասին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, մինչհամալսարանական կրթության վարչության պետ Վ. Գալստյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Գևորգյանը:

Որոշեցին.- Հաստատել ԵՊՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցը:

2. **Լսեցին.** - 2013/14 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի կանոնակարգի հաստատման մասին: Հ. Ժամհարյանը նշեց ընդունելության փոփոխվող ժամկետների մասին և որոշ մասնագիտացումներով ընդունելության կարգի մասին:

Որոշեցին. - Հաստատել 2013-14 ուստարվա ԵՊՀ առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգերը:

3. **Լսեցին.**- Հաղորդում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեության մասին: Լ. Հակոբյանը համառոտ անդրադարձավ կենտրոնի անցած ուղու, գործունեության հիմնական ուղիքների մասին: Մատնացույց արվեց ոլորտին առնչվող հիմնական խնդիրները և կոչ արվեց ֆակուլտետների համագործակցել կենտրոնի հետ շրջանավարտների, նրանց զբաղվածության մասին տվյալների հավաքագրման, մշակման ուղղությամբ:

Լսեցին. – Ընթացիկ հարցեր

1. **Լսեցին.** - Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում կազմակերպվող <Ցեղասպանագիտություն> մագիստրոսական ծրագրի ուսման վարձի չափի հաստատման մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը հիմնավորեց վարձի 450 հազար դրամ կազմելու անհրաժեշտությունը: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանն առաջարկեց ԵՊՀ-ի հաշվին 2 անվճար ուսուցմամբ տեղ հատկացնել (տղաների դեպքում առանց բանակից տարկետման իրավունքի):

Որոշեցին. - <Ցեղասպանագիտություն> մագիստրոսական ծրագրի ուսման վարձի չափ հաստատել 450 հազար դրամը:

2. **Լսեցին.** - Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի և ՌԴ Սիբիրի դաշնային համալսարանի հետ համատեղ ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում <<ֆիզիկական էկոլոգիայի>> միջազգային համատեղ լաբորատորիա ստեղծելու մասին: Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը ներկայացրեց Սիբիրի համալսարանի հետ ունեցած պայմանավորվածությունները և ստեղծվելիք լաբորատորիայի առավելությունները:

Որոշեցին. - ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծել <<ֆիզիկական էկոլոգիայի>> միջազգային համատեղ գիտահետազոտական լաբորատորիա:

3. **Լսեցին.** - Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Հայաստանի եվրոպական բարեկամների միջազգային ՀԿ-ի անդամ Չարլզ Թեննոքին ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը անդրադարձավ դր. Թեննոքի հայանպաստ գործունեությանը՝ շեշտելով, որ դրա համար նա դեռ 2009թ. ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է <Մխիթար Գոշ> մեդալով: Որոշեցին. – Չարլզ Թեննոքին շնորհել ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

02.05.2013թ.